МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

ք. Երևան **06.09.2024թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/146»

(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2024 թվականի հունիսի 26-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է համակարգիչների ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/146» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել «Ֆուդսիթի» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 01028873, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2-րդ նիստի արձանագրության 8-րդ կետով Ընկերությունը Ընթացակարգի 1-ից 4-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված (հաղթող) մասնակից, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ 2024 թվականի օգոստոսի 2-ի 3-րդ նիստի արձանագրության 1-ին կետով գնահատող հանձնաժողովը որոշել է նախորդ (2-րդ) նիստի արձանագրության 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերը ճանաչել առ ոչինչ, ինչպես նաև լիազորել ԵՊՀ-ին դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը (այսուհետ՝ Լիազոր մարմին)՝ Ընթացակարգը «www.eauction.armeps.am» համակարգով գնահատման փուլ վերադարձնելու և կրկնակի գնահատում կատարելու նպատակով, քանի որ հայտնաբերվել է, որ Ընկերությունը ներառված է Լիազոր մարմնի կողմից վարվող գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում

(փոխկապակցված է «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01043009)): Արդյունքում Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 121-րդ կետի համաձայն «մասնակցի՝ օրենքի («Գնումների մասին» օրենքի) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման»:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն «մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ **գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը**, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ **գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը** և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը»:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

ՈՐՈՇԵՑ

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ
ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ